09.06 5012

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«09» 06 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 075 - 26

Նախաձեռնող՝ ***«Սամվել Սարգսյան» Ա/Ձ***
Արտաշատ համայնք, Մխչյան բնակավայր Գրիբոյեդովի փ. 18տ

Գործունեությունը՝ ***Ջերմոցային տնտեսության կառուցում***
Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Մխչյան բնակավայր 11/1 հողամաս

Առդիր՝ 4 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 075 - 26

«09» հունվար **2026թ.**

Արարատի մարզի Արտաշատ համայնքի Մխչյան բնակավայրի 11/1 հողամաս հասցեում ջերմոցային տնտեսության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Սամվել Սարգսյան» Ա/Ձ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Մխչյան բնակավայր

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ ջերմոցային տնտեսության նախագիծը նախատեսվում է իրականացնել Մխչյան բնակավայրի 11/1 հողամաս հասցեում: Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից ջերմոցային տնտեսություն՝ ծաղիկների աճեցման համար:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Դիտարկվող տարածքն իրենից ներկայացնում է 1.4504 հա մակերեսով հողամաս:

Նախագծի և հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը՝

- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N ՆԹ-0209-26 տրված՝ 09.01.2026թ:

Անշարժ գույքի սեփականության № 10122025-03-0084 վկայականը՝ կադաստրային ծածկագիր՝ /03-059-0338-0011/: Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Նկարագրական մաս. Նախատեսվող ջերմոցային տնտեսությունը գտնվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Մխչյան բնակավայրի 11/1 հողամաս հասցեում: Հողամասը իրենից ներկայացնում է չկառուցապատված տարածք:

1.4504 հա մակերեսով հողամասում նախատեսվում է կառուցել երկու ջերմոցներ, որի ընդհանուր մակերեսը կազմելու է ՝ 10912քմ:

Կառուցապատման մակերես՝ 80.52%

1 ջերմոց 128.0x44.00մ առանցքային չափերով:

2 ջերմոց 112.0x48.00x104.00x36.00x12.00x8.00մ առանցքային չափերով:

Տեխնիկական և սպասարկման սրահ 63.94x12.00մ չափերով:

Ջերմոցային տնտեսության շինությունների հիմնակմախքը իրականացվելու է հավաքովի մետաղական էլեմենտներով և ապակեպատումով: Մուտքն ու ելքը նախատեսվում է իրականացնել հողամասի հետևի մասից՝ հողամասեր տանող ճանապարհով:

Տարածքին հարակից արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ պատմամշակութային հուշարձաններ չկա:

Ջերմատան գազամատակարարումը կատարվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայմանի՝ շինթույլտվության ստացումից հետո, արտաքին էլեկտրամատակարարումը կիրականացվի գործող էլեկտրամատակարարման բաշխիչ ցանցին միանալով:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության և նախագծի փորձաքննական գործընթացի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսում և դրանց կանխարգելման, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումների արդյունավետության դիտարկումներ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝

• շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ,

• օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, հողային աշխատանքների՝ գրունտի քանդման, փորման հետևիցքի հետ,

• հողային, ջրային ռեսուրսների օգտագործման հետ,

• արտակարգ իրավիճակների առաջացման,

• թափոնների կառավարման հետ՝ ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման ընթացքում:

Գործունեության ընթացքում առաջացող կենցաղային աղբը հավաքվելու և տեղափոխվելու է համապատասխան աղբահանության ծառայություն իրականացնող

կազմակերպության կողմից: Ջերմոցի ապակեպատ կառուցվածքը հնարավորություն է տալիս բացառել պոլիէթիլենային թափոնների առաջացումը: Շահագործման ընթացքում առաջացող կոտրված ապակիները հավաքվելու են առանձին և հնարավորության դեպքում, փոխանցվեն մասնագիտացված կազմակերպությունների վերամշակման նպատակով:

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված է՝ հողային և շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան:

Ջրցանի ծավալները հաշվարկելու են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար, իսկ շահագործման ընթացքում կիրառվելու են կաթիլային ոռոգման համակարգեր, ինչը թույլ է տալիս խնայել ջուրը և կանխել հողի գերխոնավացումն ու աղակալումը:

Տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ կամ կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

Եզրափակիչ մաս. Օրենսդրությանը համապատասխան՝ հանրային լսումներն իրականացվել են Մխչյան բանակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Արարատի մարզպետարանի և Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Հանրային երկրորդ լսումն օրենքով սահմանված կարգով անցկացվել է Մխչյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Մասնակիցները կողմ են արտահայտվել նախատեսվող գործունեությանը: Ի գիտություն նախաձեռնողին ներկայացվել է առ այն, որ ՀՀ Ջրային օրենսգրքի 37.1-րդ հոդվածի 13-րդ կետի՝ Արարատյան դաշտի՝ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի ղեկավարի կողմից Արարատի և Արմավիրի մարզերի համայնքներում արգելվում է նոր հորատանցքերի միջոցով ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը:

Նախաձեռնողի կողմից նախատեսվում է մշտադիտարկումներ՝ (մոնիթորինգ) հիմնական աշխատանքների իրականացման ընթացքում, այդ թվում՝

- հողի աղակալման աստիճանի և թթվայնության (pH) փոփոխությունների պարբերական մշտադիտարկում,
- ապակե ծածկերի օգտագործումից առաջացող թափոնների ծավալների հաշվառում և դրանց կառավարման/վերամշակման հսկողություն,
- օրգանական թափոնների (բույսերի մնացորդների) կառավարման և վերամշակման (կոմպոստացման) գործընթացներ
- ջերմոցային գազերի արտանետումների գնահատում, ներառյալ՝ CO_2 և մեթան՝ օրգանական պարարտանյութերի կիրառման դեպքում, ազոտի օքսիդի (N_2O) արտանետումների գնահատում՝ ազոտային պարարտանյութերի օգտագործման արդյունքում:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 135.000.000 ՀՀ դրամ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
- Առաջնորդվել՝ «Թափոնների մասին» օրենքի 20-րդ հոդվածի պահանջներով՝ բացառելով ջերմատան հարակից տարածքներում թափոնների անկանոն կուտակումը, երկրորդային աղտոտման առաջացումը և շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:
- Ջերմատան նպատակների համար կիրառվող թունաքիմիկատների և դրանցից առաջացող վտանգավոր թափոնների պահեստավորումը, հաշվառումը, ժամանակավոր կուտակումը և հեռացումը կազմակերպել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ բացառելով դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա: Թունաքիմիկատների դատարկ տարրաները, ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի պատրաստուկները փոխանցել համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Արտաշատ համայնքի Մխչյան բնակավայրի 11/1 հողամաս հասցեում ջերմոցային տնտեսության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված պարտադիր կատարման ենթակա պահանջների իրականացման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան